[1] Դուրս գրման ամսաթիվ		
11	Հուլիս	2019 թ.
[4] Առաքման ամսաթիվ		
11	Հուլիս	2019 թ.

Հաշիվ վավերագիր
(արտադրանքների, ապրանքների առաքման)

[2] Սերիա	[3] Համար
Բ	7178608282

Ճշգրտվող հաշիվ վավերագրի	
Սերիա	Համար

Ճշգրտվող հաշիվ վավերագիրի դուրս գրման ամսաթիվ		

Պայմանագիր	
[5] Կնքման ամսաթիվ	[6] Համար
18 Հունվար, 2018 թ.	

[7] Լրացուցիչ տվյալներ (պայմաններ)

[7.1] ՀԴՄ կտրոնի համար

Արտադրանք, ապրանք առաքող անձի

[8] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ)	0	6	9	0	2	0	8	7	
[9] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը	0	6	9	0	2	0	8	7	/ 1

[10] Անվանումը	«ԼՈՌՈՒ ՄԱՐԶԱՅԻՆ ՀՈԳԵՆՅԱՐԴԱԲԱՆԱԿԱՆ ԴԻՄՊԱՆՄԵՐ» ՊԵՏԱԿԱՆ Փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)	
[11] Բանկային տվյալները	"ԱՄԵՐԻԱԲԱՆԿ" ՓԲԸ	N 1570015001210100
[12] Գտնվելու վայրը (հասցեն)	ԼՈՌԻ ՎԱՆԱՁՈՐ ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[13] Վայրը, որտեղից ապրանքները առաքվում են	ՎԱՆԱՁՈՐ Գ. ՆԺԴԵՀԻ Փ. 57	
[14] Լրացուցիչ տվյալներ		

Արտադրանք, ապրանք ձեռք բերող անձի

[15] Հարկ վճարողի հաշվառման համարը (ՀՎՀՀ) (ֆիզիկական անձի անձնագրի սերիան և համարը)	0	2	6	3	1	2	6	3
[16] Ավելացված արժեքի հարկ վճարողի հաշվառման համարը								

[17] Անվանումը (ֆիզիկական անձի անունը, ազգանունը)	«ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՔՆՆՉԱԿԱՆ ԿՈՄԻՏԵԻ ԴԵՊԱՐՏԱՄԵՆՏ» Պետական կառավարչական հիմնարկ	
[18] Բանկային տվյալները	ՀՀ ֆինանսների նախարարության աշխակատազմի գործառնական վարչություն	N 900011000834
[19] Գտնվելու վայրը (բնակության վայրը)	ԵՐԵՎԱՆ ԱՐԱԲԿԻՐ ԱՐԱԲԿԻՐ ԹԱՂԱՄԱՍ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5	
[20] Լրացուցիչ տվյալներ		

[21] Ում միջոցով	Անուն, ազգանուն		
	Լիազորագիր	Համար	
		Ամսաթիվ	
[22] Մատակարարման (առաքման) եղանակը			
[23] Մատակարարվող (առաքվող) արտադրանքների, ապրանքների նշանակման վայրը (հասցեն)	ԱՐԱԲԿԻՐ ՄԱՄԻԿՈՆՅԱՆՑ Փ. 46/5		

[24] Մատակարարվող արտադրանքների, ապրանքների քանակի և վճարման ենթակա գումարի հաշվարկը

Հ	Առաքվող արտադրանքի, ապրանքի անվանումը	Չափի միավորը	Քանակը	Միավորի գինը	Զեղչ(%)	Արժեքը	Այդ թվում՝ բնակ. հարկ	Այդ թվում՝ դեպոզիտ. հարկի գումար
1	2	3	4	5	6	7	8	9
1	Դատահոգեբուժական փորձաքննությունների փորձագիտական եզրակացություն թիվ 90752419 բ/գ,	հատ	1	39400		39400		
Ընդամենը						39400		

Առաքող՝ PIROGOVA EMMA 6805680298
(անունը, ազգանունը)

Ստացող
(անունը, ազգանունը)

11/07/2019 11:01:43

ՈՐՈՇՈՒՄ

Ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննություն նշանակելու մասին

05. մայիսի 2019թ. ք.Իջևան

ՀՀ ՔԿ ՋՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնի պետի տեղակալ, արդարադատության երրորդ դասի խորհրդական Ա.Ա.Սևինյանս, վերանայելով թիվ 90752419 քրեական գործի նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

ՀՀ ՊՆ 21127 զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը 17.10.2018թ-ին՝ ժամը 17:00-ի սահմաններում, զորամասի հարակից տարածքում ածելու սայրով իր առողջությանը վնաս է պատճառել, որից հետո նույն զորամասի պարտադիր ժամկետային զինծառայող, շարքային Աբաս Դավրեշի Հասանյանի ուղեկցությամբ տեղափոխվել է զորամասի բուժկետ, այնուհետև ք.Բերդի զինվորական հոսպիտալ, որը հանգեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Բացի այդ, նույն օրը՝ ժամը 20:00-ի սահմաններում, զորամասի հետախուզական վաշտի հրամանատար, կապիտան Մարտին Լևոնի Մաթևոսյանը զորամասի բուժկետի դիմաց Ա.Հասանյանից հարցրել է Ղ.Մարտիրոսյանի վնասվածքներ ստանալու հանգամանքների մասին, ապա վիճաբանել Ա.Հասանյանի հետ, որի ընթացքում զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված՝ իրեն ստելու համար, հայհոյանք հնչեցնելով՝ ծեծի է ենթարկել իր նկատմամբ ստորադաս հանդիսացող Ա.Հասանյանին՝ բռունցքով և գլխով հարվածել է նրա դեմքին՝ պատճառելով ֆիզիկական ցավ և առողջության թեթև վնասի հատկանիշներ չպարունակող մարմնական վնասվածք, ապա վերջինիս տարել իր աշխատասենյակ, որտեղ էլ Աբաս Հասանյանը զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված՝ իր նկատմամբ բռնություն գործադրելու համար աշխատասենյակից վերցրել է որպես զենք օգտագործվող այլ առարկա հանդիսացող մկրատ և դրանով բռնություն գործադրելու սպառնալիք տվել իր նկատմամբ պետ հանդիսացող, կապիտան Մարտին Մաթևոսյանին՝ ցանկանալով մկրատով հարվածել նրան: Այդ ժամանակ հետախուզական վաշտ է եկել զորամասի հետախուզության պետ, մայոր Արագած Արմիկի Մարտիրոսյանը, ով ցանկացել է հանդարտեցնել Ա.Հասանյանին, սակայն վերջինս զինվորական ծառայության պարտականությունները կատարելու հետ չկապված՝ իր ձեռքում գտնվող որպես զենք օգտագործվող այլ առարկա հանդիսացող մկրատով բռնություն գործադրելու սպառնալիք է տվել նաև իր նկատմամբ պետ հանդիսացող, մայոր Արագած Արմիկի Մարտիրոսյանի նկատմամբ՝ ցանկանալով մկրատով հարվածել նրան, վերջինս էլ պաշտպանվելու նպատակով հարվածել է Ա.Հասանյանի դեմքին՝ պատճառելով ստորին ծնոտի երկկողմանի աջից մարմնի և ձախից հոդային եղունի շրջանների կոտրվածքներ:

Դեպքերի առթիվ ՀՀ ՊՆ Տավուշի ՌՈ բաժնում նախապատրաստվել են նյութեր, [illegible] զինվորական դատախազությունում ՀՀ

հոդվածի 1-ին մասով, ՀՀ քրեական օրենսգրքի 358-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետով և ՀՀ քրեական օրենսգրքի 358.1-րդ հոդվածի 3-րդ մասի 4-րդ կետով նախատեսված հանցագործությունների հատկանիշներով հարուցվել է թիվ 90412018 քրեական գործը և նախաքննություն կատարելու համար ուղարկվել ՀՀ ՔԿ ՋՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժին:

02.11.2018թ-ին քրեական գործն ընդունվել է ՀՀ ՔԿ ՋՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժնի վարույթ և ձեռնարկվել նախաքննություն:

Դեռևս նյութերի նախապապատրաստման ընթացքում շարքային Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը բացատրություն է տվել, որ 08.10.2018թ-ից մինչև 17.10.2018թ-ը գտնվել է հերթական արձակուրդում: 17.10.2018թ-ին՝ ժամը 16:30-ի սահմաններում, արձակուրդից զորամաս է վերադարձել, որտեղ 2-րդ հրաձգային գումարտակի հրամանատարի անձնակազմի հետ տարվող աշխատանքների գծով տեղակալ, կապիտան Դավիթ Մկրտչյանը ստուգել է իր ծանրոցը: Այդ ընթացքում, մտավախություն ունենալով, որ վերջինիս կողմից կհայտնաբերվի իր պայուսակում ապակե տարայով, կանաչ գույնի <<ABSENT>> տեսակի ոգելից խմիչքի հանգամանքը, այն պայուսակից հանել է, ապա վազքով գնացել է բուժկետի ուղղությամբ և նշված տարան նետել մոտակա գետը: Այնուհետև, վերադարձել է կապիտան Դ.Մկրտչյանի մոտ, որից հետո վերջինս իրեն աշխատասենյակ է հրավիրել: Ինքն էլ, ենթադրելով, որ Դ.Մկրտչյանն իրեն պատժի կենթարկի, գնացել է զորամասի հարակից անտառ և, նյարդերը հանգստացնելու համար, իր մոտ գտնվող ածելիով ձախ ձեռքին բազմաթիվ քերծվածքներ է կատարել:

Նշել է նաև, որ արձակուրդում գտնված ժամանակ մեկ անգամ միայնակ թմրամիջոց է օգտագործել, իսկ թմրամիջոցը գտել է Բյուրեղավան քաղաքի գերեզմանոցի հարակից տարածքից:

Բացի այդ, շարքային Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը 2018թ-ի հոկտեմբերի 19-ին ՀՀ ՊՆ ԵԿՀ հոգեբուժական բաժանմունքում ամբուլատոր բուժօգնություն ստանալուց հետո, նույն օրը՝ ժամը 15:50-ի սահմաններում, ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի տարածքում, զորամաս վերադառնալու նպատակով գտնվելով ավտոմեքենայի մեջ, ածելիով իր առողջությանը պատճառել է աջ նախաբազկի u/3 առաջային մակերեսի կտրած վերքերի ձևով մարմնական վնասվածքներ, որը հանգեցրել է նրա կողմից զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն:

Դեպքի առթիվ ՀՀ ՊՆ Երևանի ՌՈ բաժնում նախապատրաստվել են նյութեր, այնուհետև 29.10.2018թ-ին Երևանի կայազորի զինվորական դատախազությունում ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով հարուցվել է թիվ 90212718 քրեական գործը, որը նախաքննություն կատարելու համար ուղարկվել է ՀՀ ՔԿ ՋՔԳՎ չորրորդ կայազորային քննչական բաժին:

Այնուհետև, քրեական գործն ուղարկվել է ՀՀ ՔԿ ՋՔԳՎ վեցերորդ կայազորային քննչական բաժին, որտեղ 08.01.2019թ-ին ընդունվել է վարույթ և ձեռնարկվել նախաքննության շարունակումը:

Նույն օրը որոշում է կայացվել թիվ 90412018 և 90212718 քրեական գործերը մեկ [illegible] թիվ 90412018 հանրագրի շարունակելու մասին:

Քրեական գործի նախաքննության ընթացքում պարզվել է, որ դեռևս ՀՀ ՊՆ Երևանի ՌՈ բաժնում նյութերի նախապատրաստման ընթացքում շարքային Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը բացատրություն է տվել, որ 19.10.2018թ-ին ածելիով ինքնավնասում կատարել է կյանքին վերջ տալու նպատակով, քանի որ իրեն ավելորդ է համարել կյանքում, ոչ մեկին որևէ բանով չի կարող պիտանի լինել, իսկ կյանքին վերջ տալու մտադրությունն իր մոտ առաջացել է դեռևս 16 տարեկանից:

Ղ.Մարտիրոսյանը նույն բացատրության մեջ նաև նշել է, որ իր կողմից ինքնավնասում կատարելու եղանակով կյանքին վերջ տալու փորձը կապված չի եղել զինվորական ծառայության հետ, զորամասում որևէ խնդիր չի ունեցել, որևէ մեկն իրեն չի նեղել, իր նկատմամբ բռնություն կամ ճնշում չի գործադրել:

Բացի այդ, նախաքննության ընթացքում պարզվել է, որ 19.10.2018թ-ին, ժամը՝ 14:15-ի սահմաններում, շարքային Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը կոնսուլտացիայի նպատակով ՀՀ ՊՆ 88865 զորամասի հոգեբուժական բաժանմունք է ներկայացվել, ինչը կապված է եղել վերջինիս կողմից ինքնավնասում կատարելու հետ: Կոնսուլտացիայի արդյունքում Ղ.Մարտիրոսյանի մոտ հոսպիտալացման համար ցուցումներ չեն եղել, նրա մոտ սուր հոգեախտաբանական պաթոլոգիա չի հայտնաբերվել: Սակայն, վերջինս նույն օրը, ՀՀ ՊՆ կենտրոնական կլինիկական զինվորական հոսպիտալի տարածքում ինքնավնասում կատարելու պատճառով, կրկին ուղեգրվել է ՀՀ ՊՆ 88865 զորամաս, որտեղ հոգեբուժական բաժանմունքում պահվել է դիտարկման տակ: Այնուհետև, հաջորդ օրը՝ 20.10.2018թ-ին, բաժանմունքից տեղափոխվել է ՀՀ ՊՆ 20440 զորամաս:

22.05.2019թ-ին Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանին ՀՀ քրեական օրենսգրքի 363 հոդվածի 1-ին մասով /2 դրվագով/ մեղադրանք է առաջադրվել այն բանի համար, որ նա, 29.08.2018թ-ից մինչև 17.04.2019թ-ը հանդիսանալով ՀՀ ՊՆ 21127 զորամասի 2-րդ հրաձգային գումարտակի 5-րդ հրաձգային վաշտի 3-րդ հրաձգային դասակի 1-ին հրաձգային ջոկի հրաձիգ, պարտադիր ժամկետային զինծառայող, կոչումով շարքային, 2018թ-ի հոկտեմբերի 17-ին՝ ժամը 18:00-ից 19:00-ի սահմաններում, զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու նպատակով՝ զինհոսպիտալ տեղափոխվելու համար, զորամասի հարակից տարածքում իր առողջությանը վնաս է պատճառել՝ իր մոտ գտնվող ածելիով ձախ նախաբազկի շրջաններին կտրվածքներ է կատարել, որը հանգեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն՝ նույն օրը տեղափոխվել է Բերդ քաղաքի զինվորական հոսպիտալ, իսկ 19.10.2019թ-ին՝ Երևանի կայազորի զինվորական հոսպիտալի հոգեբուժական բաժանմունք:

Այնուհետև, 2018թ-ի հոկտեմբերի 19-ին՝ ժամը 15:50-ի սահմաններում, զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու նպատակով՝ զինհոսպիտալ տեղափոխվելու համար, ՀՀ ՊՆ 14203 զորամասի տարածքում իր առողջությանը վնաս է պատճառել՝ իր մոտ գտնվող ածելիով աջ նախաբազկի առաջային շրջաններին կտրվածքներ է կատարել՝ իր առողջությանը վնաս է պատճառել, որը հանգեցրել է զինվորական ծառայության պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելուն՝ նույն օրը տեղափոխվել է Երևանի [illegible] հոգեբուժական բաժանմունք, իսկ հաջորդ օրը՝ ՀՀ ՊՆ

Առաջադրված մեղադրանքում Ղ.Մարտիրոսյանն իրեն մեղավոր չի ճանաչել և որպես մեղադրյալ ցուցմունք է տվել, որ իր կողմից ինքնավնասումներ կատարելով զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես կամ վերջնականապես դադարեցնելու նպատակ չի ունեցել, այլ ինքնավնասում կատարել է նյարդայնացած և հուզված վիճակում՝ նյարդերը հանգստացնելու նպատակով: Ծառայության ընթացքում զորամասում զինծառայողների, ինչպես նաև զինվորական ծառայության հետ կապված խնդիրներ չի ունեցել: Արձակուրդում գտնվելու ընթացքում՝ 2018թ-ի հոկտեմբերի 14-ին, գնացել է Արթիկ քաղաքին հարակից Լեռնակերտ գյուղի գերեզմանատուն և այցել հոր շիրմին: Այնուհետև, մտածմունքների մեջ է ընկել, նաև հուզվել, և որոշ ժամանակ անց այնտեղից դուրս եկել: Ապա, գերեզմանատան դարպասներից մոտ 50մ առաջանալով, փոքր կամրջի վրայով քայլելու ընթացքում, աջակողմյան տարածքում կանեփ տեսակի թմրամիջոցի թուփ է նկատել: Հոր շիրմին կատարած այցելությունից դեռևս հուզված և գտնվելով մտածմունքների մեջ որոշել է թմրամիջոց օգտագործել, որպեսզի մի փոքր թեթևանա և մտքերը ցրվեն: Այդ նպատակով կանեփի թփից մի քանի տերև է պոկել, դրանք տեղում չորացրել և անմիջապես գործածել, որից հետո տրամադրությունի մի տեսակ փոփոխվել է և մի փոքր թեթև է զգացել:

Նշել է նաև, որ, 19.10.2018թ-ին ածելիով ինքնավնասում կատարելու կապակցությամբ իր կողմից ներկայացրած այն պատճառաբանությունը, թե ինքնավնասումը կյանքին վերջ տալու նպատակով է կատարել, քանի որ իրեն ավելորդ է համարել կյանքում, ոչ մեկին որևէ բանով չի կարող պիտանի լինել, իրականությանը չի համապատասխանում, ինքը կյանքին վերջ տալու մտադրություն չի ունեցել, իսկ թե ինչու է այդպես հայտնել՝ չի կարողացել պարզաբանել:

Դատաբժշկական փորձաքննության թիվ 046/հ եզրակացության համաձայն՝ Ղուկաս Մարտիրոսյանի ստացած մարմնական վնասվածքները, ըստ բժշկական փաստաթղթերի և օբյեկտիվ քննության տվյալների՝ ձախ նախաբազկի շրջանների կտրած վերքերի ձևով, հասցվել են սուր կտրող գործիքով /ներով/ կամ առարկայով /ներով/, հնարավոր են որոշման մեջ և փորձաքննվողի կողմից նշված ժամկետում և հանգամանքներում, որոնք առողջությանը պատճառել են թեթև վնաս առողջության կարճատև քայքայումով:

Դատաբժշկական փորձաքննության թիվ 3083/հ եզրակացության համաձայն՝ Ղուկաս Մարտիրոսյանի ստացած մարմնական վնասվածքները՝ աջ նախաբազկի ս/3-ի առաջային մակերեսի կտրած վերքերի ձևով, հասցվել են սուր կտրող գործիքով, ինչպիսին կարող էր հանդիսանալ նաև ածելին, հնարավոր է նշված ժամկետում, չի բացառվում որոշման մեջ նկարագրված գործի հանգամանքներում, որոնք պատճառել են առողջությանը թեթև վնաս առողջության կարճատև քայքայումով:

Նյութերի նախապատրաստման ընթացքում 17.10.2018թ-ին շարքային Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանից վերցվել է արյան, մեզի և մազի նմուշներ և նշանակվել է դատատոքսիկոքիմիական փորձաքննություն:

30.11.2018թ-ին վարույթն իրականացնող մարմնում ստացվել է դատատոքսիկոքիմիական փորձաքննության թիվ 520 եզրակացությունը, համաձայն որի՝ փորձաքննությանը ներկայացված Ղուկաս Մարտիրոսյանից վերցված արյան և մազի [illegible]

թմրալկալոիդներ, որոնց օգտագործման ժամանակահատվածը համապատասխանում է մինչև յոթ օրվա վաղեմության:

30.05.2019թ-ին որոշում է կայացվել թիվ 90412018 քրեական գործից՝ Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանի կողմից՝ 2018թ-ի հոկտեմբերի 17-ին և 19-ին զինվորական ծառայության առանձին պարտականությունների կատարումը ժամանակավորապես դադարեցնելու նպատակով՝ զինհոսպիտալ տեղափոխվելու համար, իր առողջությանը վնաս պատճառելու դեպքերով ՀՀ քրեական օրենսգրքի 363-րդ հոդվածի 1-ին մասով /երկու դրվագով/ կատարած հանցանքների վերաբերյալ գործ անջատելու և վարույթ ընդունելու մասին, որին շնորհվել է թիվ 90752419 համարը:

Նկատի ունենալով որ քրեական գործով կարևոր նշանակություն ունեցող մի շարք հարցեր պարզելու համար անհրաժեշտ են հոգեբուժական բնագավառի հատուկ գիտելիքներ, ուստի ղեկավարվելով ՀՀքր. դատ. օր-ի 55-րդհոդ., 243-245-րդն 248-րդ հոդվածներով.

ՈՐՈՇԵՑԻ

1. Թիվ 90752419 քրեական գործով նշանակել ամբուլատոր հոգեբուժական փորձաքննություն, որի կատարումը հանձնարարել <<Լոռու մարզային հոգենյարդաբանական դիսպանսեր>> ՊՓԲԸ ամբուլատոր դատահոգեբուժական փորձաքննությունների հանձնաժողովի փորձագետներին ու նրանց նախազգուշացնել ՀՀ քր. օր-ի 338-րդ հոդ. նախատեսված քրեական պատասխանատվության մասին:

2. Պարզաբանման համար փորձագետներին առաջադրել հետևյալ հարցերը.

ա/ Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը նախկինում կամ ներկայումս որևէ հոգեկան հիվանդությամբ տառապել կամ տառապում է, թե ոչ, եթե այո, ապա ինչ հիվանդությամբ և երբվանից:

բ/ Ներկա հոգեկան վիճակով Ղուկաս Մարտիրոսյանը կարող է հասկանալ իր գործողությունների բնույթն ու նշանակությունը և ղեկավարել դրանք:

գ/ Ղուկաս Մարտիրոսյանը 17.10.2019թ. ինքնավնասում կատարելու պահին գիտակցել է իր գործողությունների բնույթը, նշանակությունը, վտանգավորությունը և ունակ է եղել ղեկավարել դրանք, թե ոչ:

դ/ Ղուկաս Մարտիրոսյանը 19.10.2019թ. ինքնավնասում կատարելու պահին գիտակցել է իր գործողությունների բնույթը, նշանակությունը, վտանգավորությունը և ունակ է եղել ղեկավարել դրանք, թե ոչ:

ե/Ղուկաս Մարտիրոսյանը կարող է ճիշտ ընկալել և վերարտադրել քրեական գործի համար կարևոր նշանակություն ունեցող հանգամանքները:

զ/ Ներկա հոգեկան վիճակով Ղուկաս Մարտիրոսյանը կարող է մասնակցել քննչական գործողություններին, թե ոչ:

է/ Եթե Ղուկաս Մարտիրոսյանը տառապում է որևէ հոգեկան հիվանդությամբ, ապա կատարած ինքնավնասումները հանդիսանում են արդյոք տվյալ հիվանդության դրսևորման եղանակ:

ը/ Եթե Ղուկաս Մարտիրոսյանը տառապում է հոգեկան հիվանդությամբ, ապա նրա

3.Եթե փորձաքննության ընթացքում կառաջանան նաև այլ հարցեր, որոնք սույն որոշմամբ առաջադրված չեն, ապա խնդրում եմ պատասխանել նաև դրանց:

4. Ղուկաս Հովակիմի Մարտիրոսյանը զինվորական ծառայության մեջ է գտնվում ՀՀ ՊՆ 51191 զորամասում /ք.Իջևան/, և անհրաժեշտության դեպքում կներկայացվի փորձագիտական հանձնաժողովին:

Անհրաժեշտության դեպքում փորձագետներին տրամադրել Ղ.Մարտիրոսյանի զորակոչային գործը, մանկան զարգացման պատմությունը և թիվ 90752419 քրեական գործի նյութերը:

ՀՀ ՔԿ ԶՔԳՎ վեցերորդ կայազորային
քննչական բաժնի պետի տեղակալ,
արդարադատության երրորդ դասի խորհրդական՝ *Ա.Ա.Սևինյան*